

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ Կողմեր),

հիմնվելով «Մաքսային միության մասին» Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության միջև 1995 թվականի հունվարի 6-ին կնքված համաձայնագրի, «Մաքսային միության մասին» 1995 թվականի հունվարի 20-ի համաձայնագրի, «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականի փետրվարի 26-ի պայմանագրի, «Եվրասիական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» 2000 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի, «Միասնական մաքսային տարածքի ստեղծման և Մաքսային միության ձեւավորման մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի վրա,

հաստատելով տնտեսական համագործակցությունը զարգացնելու և Կողմերի առեւտրային ու տնտեսական կապերն ընդլայնելու մտադրությունը,

հաշվի առնելով մրցակցությունը խթանելու անհրաժեշտությունը՝ տնտեսության արդյունավետ զարգացումն ապահովելու, նորամուծական գործընթացներին զարկ տալու և որակյալ արտադրանք արտադրելու համար,

միասնական մրցակցային քաղաքականության վարումը համարելով անհրաժեշտ պայման Կողմերի Միասնական տնտեսական տարածքի ձեւավորման և արդյունավետ գործունեության համար,

հաշվի առնելով Կողմերի Միասնական տնտեսական տարածքի ապրանքաշուկաներում մրցակցային հավասար պայմանների ապահովման անհրաժեշտությունը, այդ թվում՝ Կողմերի ապրանքաշուկաներին Կողմերի տնտեսվարող սուբյեկտների հասանելիությունն առանց որեւէ խտրականության,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Բաժին I

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Համաձայնագրի նպատակներն ու առարկան

1. Սույն Համաձայնագրի նպատակը Կողմերի կողմից միասնական մրցակցային քաղաքականության ձեւավորումն է՝ ապահովելու համար ապրանքների, ծառայությունների եւ կապիտալի ազատ տեղաշարժը, Մաքսային միության մասնակից պետությունների միասնական մաքսային տարածքում ազատ տնտեսական գործունեությունը եւ ապրանքաշուկաների արդյունավետ գործունեությունը, մրցակցային քաղաքականության ոլորտում Կողմերի օրենսդրության ներդաշնակեցումը եւ այնպիսի գործողություններ արգելումը, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ Կողմերի փոխադարձ առեւտրի վրա:

2. Սույն Համաձայնագրի առարկան է մրցակցության միասնական սկզբունքներ եւ կանոններ սահմանելը, որոնք ապահովում են Կողմերի տարածքում հակամրցակցային գործողությունների բացահայտումն ու կանխումը, ինչպես նաեւ այնպիսի գործողությունների բացահայտումն ու կանխումը, որոնք բացասաբար են անդրադառնում երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա:

3. Սույն Համաձայնագիրը տարածվում է Կողմերի տարածքում մրցակցային քաղաքականության իրականացման հետ կապված հարաբերությունների եւ այն Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) մասնակցությամբ հարաբերությունների վրա, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա: Մաքսային միության հանձնաժողովի իրավասությունների շրջանակը որոշելու նպատակներով շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչները որոշվում են Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) որոշմամբ՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:

4. Կողմերն իրավասու են իրենց օրենսդրության մեջ սահմանել լրացուցիչ պահանջներ եւ սահմանափակումներ՝ սույն Համաձայնագրի II եւ III բաժիններով նախատեսված արգելքների կապակցությամբ:

5. Սույն Համաձայնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած Կողմի համար խոչընդոտ՝ ցանկացած այնպիսի միջոց ձեռնարկելու համար, որն այն անհրաժեշտ կհամարի երկրի պաշտպանության կամ պետության անվտանգության կարելուագույն շահերը պաշտպանելու համար:

6. Սույն Համաձայնագիրը կիրառվում է բնական մենաշնորհի սուբյեկտների նկատմամբ՝ հաշվի առնելով բնական մենաշնորհի վերաբերյալ Կողմերի համաձայնագրերով նախատեսված առանձնահատկությունները:

Հոդված 2

Համաձայնագրում գործածվող հասկացությունների սահմանումը

Սույն Համաձայնագրի նպատակներով գործածվում են հետեւյալ հասկացությունները.

1) «ուղղահայաց համաձայնագիր»՝ համաձայնագիր տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջեւ, որոնք չեն մրցակցում միմյանց հետ, որոնցից մեկը ձեռք է բերում ապրանքը կամ այդ ապրանքի հավանական գնորդն է, իսկ մյուսը մատակարարում է ապրանքը կամ այդ ապրանքի հավանական վաճառողն է,

2) «փոխադարձ փոխարինելի ապրանքներ»՝ ապրանքներ, որոնք կարող են համեմատվել իրենց գործառնական նշանակությամբ, գործածության, որակական եւ տեխնիկական հատկանիշներով, գնային եւ այլ հարաչափերով այնպես, որ օգտագործման (այդ թվում՝ արտադրական նպատակներով օգտագործման) ընթացքում ձեռք բերողն իրականում փոխարինի կամ պատրաստ լինի փոխարինել մեկ ապրանքը մյուսով,

3) «գների պետական կարգավորում»՝ Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով Կողմերի պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գների (սակագների), գների (սակագների) հավելումների,

առավելագույն կամ նվազագույն գների (սակագների), գների (սակագների) առավելագույն կամ նվազագույն հավելումների նախատեսումը,

4) «պետական կամ մունիցիպալ արտոնությունները»՝ Կողմերի գործադիր իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, այդ մարմինների գործառույթներն իրականացնող այլ մարմինների կամ առանձին տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կազմակերպությունների կողմից տրամադրվող առավելություններ, որոնք նրանց համար ապահովում են գործունեության ավելի շահավետ պայմաններ՝ պետական կամ մունիցիպալ գույքի, քաղաքացիական իրավունքի այլ օբյեկտների փոխանցման կամ գույքային արտոնությունների, պետական կամ մունիցիպալ երաշխիքների տրամադրման միջոցով,

5) «անձանց խումբ»՝ ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձանց ամբողջություն, որոնք բավարարում են հետեւյալ հատկանիշներից մեկը կամ մի քանիսը.

տնտեսվարող միություն (ընկերակցություն) եւ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե այդպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի տնտեսվարող միության (ընկերակցության) մեջ իր մասնակցության ուժով, կամ այլ անձանցից, այդ թվում՝ համաձայնագրի հիման վրա ստացած լիազորություններին համապատասխան, տնօրինում է այդ տնտեսվարող միության (ընկերակցության) կանոնադրական (պահուստային) կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի) ձայների ընդհանուր թվի ավելի քան հիսուն տոկոսը,

տնտեսվարող սուբյեկտ (շուկայի սուբյեկտ) եւ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե այդպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձն իրականացնում է այդ տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) միանձնյա գործադիր մարմնի գործառույթները,

տնտեսվարող սուբյեկտ (շուկայի սուբյեկտ) եւ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե այդպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) հիմնադիր փաստաթղթերի կամ այդ տնտեսվարող սուբյեկտի հետ կնքված պայմանագրի (համաձայնագրի) հիման վրա՝ իրավասու է այդ տնտեսվարող սուբյեկտին տալ կատարման համար պարտադիր ցուցումներ,

տնտեսվարող սուբյեկտներ (շուկայի սուբյեկտներ), որոնցում կոլեգիալ գործադիր մարմնի եւ (կամ) տնօրենների խորհրդի (վերահսկիչ խորհրդի, հիմնադրամի խորհրդի) քանակական կազմի 50 տոկոսից ավելին կազմում են միեւնոյն ֆիզիկական անձինք,

ֆիզիկական անձ, նրա ամուսինը (կինը), ծնողը (այդ թվում՝ նաեւ որդեգրողները), երեխաները (այդ թվում՝ նաեւ որդեգրված երեխաները), եղբայրները եւ քույրերը,

անձինք, որոնցից յուրաքանչյուրը սույն կետի երկրորդից վեցերորդ պարբերություններով նախատեսված որեւէ հիմքով նույն անձի հետ մտնում է նույն խմբի մեջ, ինչպես նաեւ՝ այլ անձինք, որոնք այդ անձանցից ցանկացածի հետ մտնում են նույն խմբի մեջ սույն կետի երկրորդից վեցերորդ պարբերություններով նախատեսված որեւէ հիմքով,

տնտեսվարող միություն (ընկերակցություն), ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձ, որոնք սույն կետի երկրորդից յոթերորդ պարբերություններով նախատեսված որեւէ հատկանիշով մտնում են անձանց մեկ խմբի մեջ, եթե այդպիսի անձինք, այդ տնտեսվարող միության (ընկերակցության) մեջ իրենց համատեղ մասնակցության ուժով կամ համաձայն այլ անձանցից ստացած լիազորությունների՝ տնօրինում են այդ տնտեսվարող միության (ընկերակցության) կանոնադրական (պահուստային) կապիտալում քվեարկվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) ձայների ընդհանուր թվի 50 տոկոսից ավելին,

Անձանց խումբը դիտարկվում է որպես միասնական տնտեսվարող սուբյեկտ (շուկայի սուբյեկտ): Տնտեսվարող սուբյեկտներին (շուկայի սուբյեկտներին) վերաբերող սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են անձանց խմբերի վրա:

Կողմերի օրենսդրության մեջ Կողմերի տարածքում մրցակցային քաղաքականության իրականացման նպատակներով «անձանց խումբ» հասկացության բնորոշումը կարող է որոշակիացվել, այդ թվում՝ անձանցից մեկի կողմից մյուս անձի կանոնադրական (պահուստային) կապիտալում այդ անձի բաժնետոմսերի (բաժնեմասերի) տնօրինման (դրանցում մասնակցության) չափերի առումով, որոնց դեպքում այդպիսի տնօրինումը (մասնակցությունը) ընդունվում է անձանց խմբի կողմից,

6) «խտրական պայմաններ»՝ ապրանքաշուկայի հասանելիության, արտադրության պայմանների, ապրանքների փոխանակման, սպառման, ձեռք բերման, վաճառքի, դրանք

այլ կերպ փոխանցելու պայմանները, որոնց դեպքում տնտեսվարող սուբյեկտը (շուկայի սուբյեկտը) կամ մի քանի տնտեսվարող սուբյեկտներ (շուկայի սուբյեկտներ) հայտնվում են անհավասար դիրքերում այլ տնտեսվարող սուբյեկտի կամ սուբյեկտների (շուկայի սուբյեկտի կամ սուբյեկտների) համեմատ՝ հաշվի առնելով Կողմերի առանձին համաձայնագրերով նախատեսված պայմանները, սահմանափակումները եւ առանձնահատկությունները,

7) «գերիշխող դիրք»՝ տնտեսվարող սուբյեկտի (անձանց խմբի) կամ մի քանի տնտեսվարող սուբյեկտների (անձանց խմբերի) դիրքը որոշակի ապրանքաշուկայում, որն այդպիսի տնտեսվարող սուբյեկտին (անձանց խմբի) կամ այդպիսի տնտեսվարող սուբյեկտներին (անձանց խմբերի) հնարավորություն է տալիս համապատասխան ապրանքաշուկայում որոշիչ ազդեցություն ունենալ ապրանքաշրջանառության ընդհանուր պայմանների վրա եւ (կամ) այդ ապրանքաշուկայից դուրս մղել այլ տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) եւ (կամ) խոչընդոտել այդ ապրանքաշուկայի հասանելիությունը այլ տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) համար,

8) «մրցակցություն»՝ տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից մրցելը, որի արդյունքում նրանցից յուրաքանչյուրի ինքնուրույն գործողությունների շնորհիվ բացառվում կամ սահմանափակվում են տվյալ ապրանքաշուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա նրանցից յուրաքանչյուրի կողմից միակողմանիորեն ազդելու հնարավորությունները,

9) «գաղտնի տեղեկություններ»՝ տեղեկատվության բոլոր այն տեսակները (ներառյալ ծառայողական, առետրային, բանկային, մասնագիտական, անձնական գաղտնիք կազմող տեղեկությունները), որոնք պաշտպանվում են Կողմերի նորմատիվ իրավական ակտերով,

10) «տնտեսական գործունեության կարգավորում»՝ տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) գործողությունների համաձայնեցում այնպիսի երրորդ անձի կողմից, որը այդպիսի տնտեսվարող սուբյեկտներից (շուկայի սուբյեկտներից) ոչ մեկի հետ չի մտնում անձանց մեկ խմբի մեջ եւ գործունեություն չի ծավալում այն ապրանքաշուկայում (ապրանքաշուկաներում), որում (որոնցում) իրականացվում է տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) գործողությունների համաձայնեցում,

11) «Անուղղակի վերահսկողություն»՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձի հնարավորությունը որոշելու իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները՝ իրավաբանական անձի միջոցով կամ մի քանի իրավաբանական անձանց միջոցով, որոնց միջեւ առկա է անմիջական վերահսկողություն,

12) «մրցակցության մոդելային օրենք»՝ Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) կողմից հաստատված խորհրդատվական բնույթի օրենսդրական ակտ, որն ուղղված է Կողմերի մրցակցային քաղաքականության ոլորտում տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորումների մոտարկմանը,

13) «մենաշնորհային բարձր գին»՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) կողմից սահմանված գին, եթե այդ գինը գերազանցում է այդպիսի ապրանքի արտադրության եւ իրացման համար անհրաժեշտ ծախսերն ու եկամուտը, ինչպես նաեւ այն գինը, որը ձեւավորվել է ապրանքաշուկայում մրցակցության պայմաններում եւ որը համադրելի է ըստ ապրանքի գնորդների կամ վաճառողների կազմի, ապրանքաշրջանառության պայմանների, ապրանքաշուկայի հասանելիության պայմանների, պետական կարգավորման՝ ներառելով հարկումն ու մաքսային եւ սակագնային կարգավորումը, (այսուհետ՝ համադրելի ապրանքաշուկա)՝ Մաքսային միության շրջանակներում միասնական մաքսային տարածքում կամ դրա շրջանակներից դուրս այդպիսի շուկայի առկայության դեպքում, կամ այն գինը, որը սահմանվել է նույն ապրանքաշուկայում ավելի վաղ, եթե այդ գինը ձեւավորվել է մրցակցության պայմաններում: Այն գինը, որը Կողմերի օրենսդրությանը համապատասխան սահմանվել է բնական մենաշնորհի սուբյեկտի կողմից այդպիսի ապրանքի սակագնի սահմաններում, չի կարող ճանաչվել որպես մենաշնորհային բարձր գին,

14) «մենաշնորհային ցածր գին»՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) կողմից սահմանված գին, եթե այդ գինը չի գերազանցում այդպիսի ապրանքի արտադրության եւ իրացման համար անհրաժեշտ ծախսերը եւ եկամուտները եւ որը ձեւավորվել է համադրելի ապրանքաշուկայում մրցակցության պայմաններում՝ Մաքսային միության շրջանակներում միասնական մաքսային տարածքում կամ դրա շրջանակներից դուրս այդպիսի շուկայի առկայության դեպքում,

15) «անբարեխիղճ մրցակցություն»՝ տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) կամ մի քանի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների)՝ ձեռնարկատիրական գործունեության մեջ առավելությունների ձեռքբերմանն ուղղված ցանկացած գործողություն, որը հակասում է Կողմերի օրենսդրությանը, գործարար շրջանառության սովորույթներին, բարեխղճության, խելամտության ու արդարության պահանջներին, ինչպես նաև վնաս են հասցրել կամ կարող են վնաս հասցնել այլ մրցակից տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների), կամ էլ վնաս են հասցրել կամ կարող են վնաս հասցնել նրանց գործարար համբավին,

16) «մրցակցության սահմանափակումների նշաններ»՝ ապրանքաշուկայում անձանց մեկ խմբի մեջ չմտնող տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) թվի կրճատումը, ապրանքի գնի աճը կամ նվազեցումը, որոնք կապված չեն ապրանքաշուկայում ապրանքաշրջանառության այլ ընդհանուր պայմանների համապատասխան փոփոխությունների հետ, անձանց մեկ խմբի մեջ չմտնող տնտեսվարող սուբյեկտների կողմից (շուկայի սուբյեկտների) ապրանքաշուկայում ինքնուրույն գործողություններ ծավալելուց հրաժարվելը, տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջև համաձայնագրի կնքման միջոցով կամ նրանց կողմից կատարման համար պարտադիր՝ այլ անձի տված ցուցումներին համապատասխան, կամ անձանց մեկ խմբի մեջ չմտնող տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից ապրանքաշուկայում իրենց գործողությունները համաձայնեցնելու արդյունքում՝ ապրանքաշուկայում ապրանքաշրջանառության ընդհանուր պայմանների սահմանումը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք տնտեսվարող սուբյեկտին (շուկայի սուբյեկտին) կամ մի քանի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) հնարավորություն են տալիս միակողմանիորեն ազդելու ապրանքաշուկայում ապրանքաշրջանառության ընդհանուր պայմանների վրա,

17) «անմիջական վերահսկողություն»՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձի հնարավորությունը որոշելու իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները ներքոնշյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի միջոցով՝

– վերջինիս գործադիր մարմնի գործառույթների իրականացում,

– իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանները սահմանելու իրավունքի ձեռք բերում,

– կանոնադրական (պահուստային) կապիտալը կազմող բաժնետոմսերով (բաժնեմասերով) տրվող ձայների ընդհանուր թվի 50 տոկոսից ավելի ձայների տնօրինում:

18) «համաձայնագիր»՝ գրավոր պայմանավորվածություն՝ ամրագրված փաստաթղթով կամ մի քանի փաստաթղթերով, ինչպես նաև բանավոր պայմանավորվածություն,

19) «ապրանք»՝ քաղաքացիական իրավունքի օբյեկտ (այդ թվում աշխատանք, ծառայություն՝ ներառյալ ֆինանսական ծառայությունը), որը նախատեսված է վաճառքի, փոխանակման կամ այն փոխհատուցման հիմունքներով շրջանառության մեջ դնելու համար,

20) «ապրանքաշուկա»՝ այն ապրանքի շրջանառության ոլորտը, որը չի կարող փոխարինվել այլ ապրանքով, կամ՝ փոխադարձ փոխարինելի ապրանքների ոլորտը, որի սահմաններում, (այդ թվում՝ աշխարհագրական), ելնելով տնտեսական, տեխնիկական կամ այլ հնարավորությունից կամ նպատակահարմարությունից, գնորդը կարող է ձեռք բերել ապրանք, եւ որի սահմաններից դուրս այդպիսի հնարավորությունը կամ նպատակահարմարությունը բացակայում է,

21) «տնտեսվարող սուբյեկտ (շուկայի սուբյեկտ)»՝ առետրային կամ ոչ առետրային կազմակերպություն, որն իրականացնում է իրեն եկամուտ բերող գործունեություն, անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև ֆիզիկական անձ, որի մասնագիտական՝ եկամուտ բերող գործունեությունը Կողմերի օրենսդրությանը համապատասխան ենթակա է պետական գրանցման եւ (կամ) լիցենզավորման,

22) «տնտեսական կոնցենտրացիա»՝ գործարքներ, այլ գործողություններ, որոնց իրականացումը ազդում է կամ կարող է ազդել մրցակցության վիճակի վրա՝ ներառյալ առետրային կազմակերպությունների ստեղծումն ու վերակազմակերպումը (միաձուլումը կամ միացումը), գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի), առետրային կազմակերպությունների գույքի, առետրային կազմակերպություններին առնչվող իրավունքների հետ:

Բաժին II

Մրցակցության միասնական սկզբունքները

Հոդված 3

Մրցակցային օրենսդրության նորմերի կիրառման մեջ հավասարության սկզբունքը

Կողմերի կողմից իրենց մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության նորմերի կիրառումը տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) նկատմամբ իրականացվում է նույն կերպ եւ հավասար չափով՝ անկախ այդպիսի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կազմակերպատիրավական ձեւից եւ գրանցման վայրից, ինչպես նաեւ՝ հավասար պայմաններով:

Հոդված 4

Իշխանության մարմինների հակամրցակցային գործողությունների անթույլատրելիության սկզբունքը

1. Կողմերն իրենց օրենսդրության մեջ սահմանում են արգելք, այդ թվում՝

1) պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, նրանց գործառույթներն իրականացնող այլ մարմինների կամ կազմակերպությունների կամ նրանց եւ տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջեւ կնքված համաձայնագրերի նկատմամբ, եթե այդպիսի համաձայնագրերը հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության արգելմանը, սահմանափակմանը կամ վերացմանը՝ բացառությամբ Կողմերի համաձայնագրերով նախատեսված դեպքերի:

2) պետական կամ մունիցիպալ արտոնությունների տրամադրման վրա՝ բացառությամբ Կողմերի օրենսդրական ակտերով նախատեսված դեպքերի՝ հաշվի առնելով Կողմերի համաձայնագրերով նախատեսված առանձնահատկությունները:

2. Կողմերը ձեռնարկում են արդյունավետ միջոցներ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված գործողությունների (անգործության), կանխարգելման, հայտնաբերման եւ խափանման ուղղությամբ:

Հոդված 5

Տնտեսական կոնցենտրացիայի նկատմամբ արդյունավետ հսկողություն ապահովելու սկզբունքը

Կողմերն իրենց օրենսդրությանը համապատասխան ապահովում են տնտեսական կոնցենտրացիայի նկատմամբ արդյունավետ հսկողություն այն չափով, որ չափով դա անհրաժեշտ է համապատասխան Կողմի տարածքում մրցակցության պաշտպանության եւ զարգացման համար:

Հոդված 6

Արդյունավետ վարչարարության սկզբունքը

Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է պետական իշխանության ներպետական այնպիսի մարմնի առկայությունը, որի իրավասության մեջ մտնում է հակամենաշնորհային (մրցակցային) քաղաքականության իրականացումը, ինչն, ի թիվս այլոց, ենթադրում է, այդպիսի մարմնին՝ հակամրցակցային գործողությունների նկատմամբ արգելքին կամ անբարեխիղճ մրցակցության նկատմամբ արգելքին հետեւելու առնչությամբ եւ տնտեսական կոնցենտրացիայի առնչությամբ վերահսկողական լիազորություններ, ինչպես նաեւ մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության խախտումները կանխարգելելու, հայտնաբերելու, նշված խախտումները դադարեցնելու, այդպիսի խախտումների համար պատասխանատվության ենթարկելու լիազորություններ վերապահելը (այսուհետ՝ Կողմի իրավասու մարմին):

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 30 օրվա ընթացքում Կողմերը միմյանց հաղորդում են իրենց իրավասու մարմինների ամբողջական անվանումները:

Հոդված 7

Հակամրցակցային գործողությունների իրականացման համար պատժամիջոցների կիրառման արդյունավետության սկզբունքը

Ելնելով համաչափության, ապահովության, անխուսափելիության եւ որոշակիության սկզբունքներից՝ Կողմերն իրենց օրենսդրության մեջ արդյունավետ պատժամիջոցներ են սահմանում՝ տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) եւ իշխանության մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ հակամրցակցային գործողություններ կատարելու համար, ինչպես նաեւ ապահովում են հսկողություն դրանց կիրառման նկատմամբ: Ընդ որում, Կողմերն ընդունում են, որ՝

պատժամիջոցները պետք է ունենան ուղղակի գործողություն եւ կիրառվեն անմիջականորեն հակամրցակցային գործողություններ կատարելու համար:

տուգանային պատժամիջոցների կիրառման դեպքում, ամենաբարձր տուգանային պատժամիջոցները պետք է սահմանվեն մրցակցության համար ամենամեծ սպառնալիք ներկայացնող խախտումների համար (մրցակցությունը սահմանափակող համաձայնագրերը, տնտեսվարող սուբյեկտների կամ շուկայի սուբյեկտների կողմից իրենց գերիշխող դիրքի չարաշահումը), ընդ որում, նախապատվությունը տրվում է այն տուգանային պատժամիջոցներին, որոնք հաշվարկվում են ելնելով այն իրավախախտի կողմից ապրանքի իրացման արդյունքում ստացված հասույթի գումարից, որի շուկայում կատարվել է այդ իրավախախտումը:

Հոդված 8

Տեղեկատվական հրապարակայնության սկզբունքը

Կողմերն ապահովում են իրենց կողմից իրականացվող մրցակցային քաղաքականության տեղեկատվական հրապարակայնությունը, այդ թվում՝ իրենց իրավասու մարմինների գործունեության մասին զանգվածային լրատվամիջոցներում եւ համացանցում տեղեկությունների տեղադրման միջոցով՝ հաշվի առնելով Կողմերի օրենսդրության դրույթները:

Հոդված 9

Արդյունավետ համագործակցության սկզբունքը

Կողմերի իրավասու մարմինները, հաշվի առնելով իրենց օրենսդրության նորմերը, փոխգործակցում են՝ միմյանց ուղարկելով ծանուցումներ, տեղեկությունների տրամադրման վերաբերյալ հարցումներ, անցկացնելով խորհրդակցություններ, տեղեկացնելով միմյանց մյուս Կողմի շահերը շոշափող՝ անցկացվող քննության (գործերի քննության) մասին, Կողմերից մեկի իրավասու մարմնի պահանջի հիման վրա անցկացնելով քննություն (գործերի քննություն) եւ տեղեկացնելով դրա արդյունքների մասին:

Բաժին III

Մրցակցության միասնական սկզբունքները

Հոդված 10

Տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից կնքված՝ մրցակցությունը սահմանափակող համաձայնագրերի նկատմամբ արգելքը

1. Արգելվում է մեկ ապրանքաշուկայում գործող մրցակից հանդիսացող տնտեսվարող սուբյեկտ (շուկայի սուբյեկտների)՝ միջեւ այնպիսի համաձայնագրերի կնքումը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել.

գների (սակագների), զեղչերի, հավելումների (հավելավճարների), հավելագների սահմանմանը կամ պահպանմանը,

աճուրդի ժամանակ գների բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը,

ապրանքաշուկայի բաժանմանը՝ ըստ տարածքային սկզբունքի, ապրանքների վաճառքի կամ գնման ծավալի, իրացվող ապրանքների տեսականու կամ վաճառողների կամ գնորդների (պատվիրատուների) կազմի,

ապրանքների արտադրության կրճատմանը կամ դադարեցմանը,

որոշակի վաճառողների կամ գնորդների (պատվիրատուների) հետ պայմանագրեր կնքելուց հրաժարվելուն:

2. Տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջև արգելվում է ուղղահայաց պայմանագրերի կնքումը (բացառությամբ այն ուղղահայաց համաձայնագրերի, որոնք թույլատրելի են համարվում սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածի 3-րդ մասով), եթե.

այդպիսի համաձայնագրերը հանգեցնում են կամ կարող են հանգեցնել ապրանքի վերավաճառքի գնի սահմանմանը՝ բացառությամբ այն դեպքի, երբ վաճառողը գնորդի համար սահմանում է ապրանքի վերավաճառքի առավելագույն գինը,

այդպիսի համաձայնագրով նախատեսվում է գնորդի պարտավորությունը՝ չվաճառելու այն տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) ապրանքը, որը վաճառողի մրցակիցն է: Այդպիսի արգելքը չի տարածվում գնորդի կողմից ապրանքանշանի ներքո կամ վաճառողին կամ արտադրողին նույնականացնող այլ միջոցով ապրանքի վաճառքը կազմակերպելու մասին համաձայնագրերի վրա:

3. Տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջև արգելվում է այլ համաձայնագրերի կնքումը (բացառությամբ այն ուղղահայաց համաձայնագրերի, որոնք թույլատրելի են համարվում սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածի 3-րդ մասով), եթե պարզվել է, որ այդպիսի համաձայնագրերը հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը:

4. Ֆիզիկական անձանց, առետրային եւ ոչ առետրային կազմակերպություններին արգելվում է իրականացնել տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) տնտեսական գործունեության համակարգում, եթե այդպիսի համակարգումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերում թվարկված հետեւանքներին:

5. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում անձանց մեկ խմբի մեջ ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջև կնքված համաձայնագրերի վրա, եթե այդ տնտեսվարող սուբյեկտներից (շուկայի սուբյեկտներից) մեկը անմիջական կամ անուղղակի վերահսկողություն է սահմանել մյուս տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) նկատմամբ, ինչպես նաեւ, եթե այդպիսի տնտեսվարող սուբյեկտները

(շուկայի սուբյեկտները) գտնվում են մեկ անձի անմիջական կամ անուղղակի վերահսկողության տակ:

6. Սույն հոդվածի պահանջները չեն տարածվում մտավոր գործունեության արդյունքների ինչպես նաև դրանց հավասարեցված՝ իրավաբանական անձի, արտադրանքի, աշխատանքների կամ ծառայությունների նույնականացման միջոցների նկատմամբ բացառիկ իրավունքների իրականացման մասին համաձայնագրերի վրա:

Հոդված 11

Համաձայնագրեր, որոնք կարող են թույլատրելի ճանաչվել

1. Սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված համաձայնագրերը՝ բացառությամբ 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված համաձայնագրերի, կարող են թույլատրելի ճանաչվել, եթե դրանք տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) նկատմամբ չեն սահմանում այնպիսի սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ չեն այդ համաձայնագրերի նպատակներն իրականացնելու համար եւ չեն ստեղծում համապատասխան ապրանքաշուկայում մրցակցության վերացման հնարավորություն, եւ եթե տնտեսվարող սուբյեկտներն (շուկայի սուբյեկտներն) ապացուցում են, որ այդպիսի համաձայնագրերն արդյունքում կարող են՝

օժանդակել ապրանքների արտադրության (իրացման) կատարելագործմանը կամ տեխնիկական (տնտեսական) առաջընթացի խթանմանը կամ համաշխարհային ապրանքաշուկայում Կողմերի կողմից արտադրված ապրանքների մրցունակության բարձրացմանը,

ապահովել համապատասխան անձանց կողմից՝ այդպիսի գործողությունների իրականացման արդյունքում ձեռք բերվող առավելությունների (օգուտների) համապատասխան մասի ստացումը սպառողների կողմից:

2. Կողմերի առանձին համաձայնագրով կարող են սահմանվել այնպիսի համաձայնագրերի թույլատրելիության դեպքերը, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 1-ին կետում նշված պայմաններին (ընդհանուր բացառություններ):

3. Ուղղահայաց համաձայնագրերը թույլատրվում են, եթե.

այդպիսի համաձայնագրերը առետրային կոնցեսիոն պայմանագրեր են,

այդպիսի համաձայնագրի մասնակից հանդիսացող յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) բաժնեմասը ցանկացած ապրանքաշուկայում չի գերազանցում 20 տոկոսը:

Հոդված 12

Տնտեսվարող սուբյեկտների կողմից իրենց գերիշխող դիրքը չարաշահելու արգելքը

1. Արգելվում են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից այնպիսի գործողություններ կատարելը (անգործություն դրսևորելը), որոնք արդյունքում հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության արգելմանը, սահմանափակմանը, վերացմանը եւ (կամ) այլ անձանց շահերի ոտնահարմանը, այդ թվում՝ հետեւյալ գործողությունները (անգործությունը).

1) ապրանքի բարձր կամ ցածր մենաշնորհային գին սահմանելը, պահպանելը,

2) ապրանքը շրջանառությունից հանելը, եթե դրա արդյունքում ապրանքի գինը բարձրացել է,

3) կոնտրագենտին՝ նրա համար ոչ շահավետ կամ պայմանագրի առարկային չվերաբերող, տնտեսապես կամ տեխնոլոգիապես չհիմնավորված պայմանագրային պայմանների հարկադրելը,

4) ապրանքի արտադրությունը տնտեսապես կամ տեխնոլոգիապես չհիմնավորված ձեւով կրճատելը կամ դադարեցնելը, եթե այդ ապրանքը ունի պահանջարկ կամ ստացվել են դրա մատակարարման պատվերներ՝ արտադրության շահութաբեր լինելու դեպքում, ինչպես նաեւ եթե ապրանքի այդպիսի կրճատումը կամ արտադրության այդպիսի դադարեցումը ուղղակիորեն նախատեսված չէ Կողմերի համաձայնությամբ,

5) առանձին գնորդների (պատվիրատուների) հետ պայմանագիր կնքելուց տնտեսապես կամ տեխնոլոգիապես չհիմնավորված ձեւով հրաժարվելը կամ խուսափելը՝ համապատասխան ապրանքի արտադրության կամ մատակարարման հնարավորության

առկայության դեպքում՝ հաշվի առնելով Կողմերի այլ համաձայնագրերով նախատեսված առանձնահատկությունները,

6) միեւնույն ապրանքի նկատմամբ տնտեսապես, տեխնոլոգիապես կամ այլ կերպ չհիմնավորված տարբեր գներ (սակագներ) սահմանելը, խտրական պայմաններ ստեղծելը՝ հաշվի առնելով Կողմերի այլ համաձայնագրերով նախատեսված առանձնահատկությունները,

7) այլ տնտեսվարող սուբյեկտների համար ապրանքաշուկայի հասանելիության կամ ապրանքաշուկայից դուրս գալու խոչընդոտներ ստեղծելը:

2. Տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքը սահմանվում է Մրցակցության վիճակի գնահատման մեթոդաբանությանը համապատասխան, որը հաստատվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ՝ ելնելով հետեւյալ հանգամանքների վերլուծությունից.

1) տնտեսվարող սուբյեկտի բաժնեմասը եւ դրա հարաբերակցությունը մրցակիցների եւ գնորդների բաժնեմասերին,

2) տնտեսվարող սուբյեկտի կողմից ապրանքի գնի մակարդակը միակողմանիորեն որոշելու եւ համապատասխան ապրանքաշուկայում ապրանքի իրացման ընդհանուր պայմանների վրա որոշիչ ազդեցություն ունենալու հնարավորությունը,

3) ապրանքաշուկայի հասանելիության համար տնտեսական, տեխնոլոգիական, վարչական կամ այլ սահմանափակումների առկայությունը,

4) ապրանքաշուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա տնտեսվարող սուբյեկտի կողմից որոշիչ ազդեցություն ունենալու հնարավորության առկայության ժամանակահատվածը:

Հոդված 13

Անբարեխիղճ մրցակցության արգելքը

1. Անբարեխիղճ մրցակցությունը չի թույլատրվում՝ ներառյալ.

1) կեղծ, ոչ ճշգրիտ կամ խեղաթյուրված տեղեկություններ տարածելը, որոնք կարող են կորուստներ առաջացնել տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) համար կամ վնաս հասցնել նրա գործարար համբավին,

2) ապրանքի արտադրության բնույթի, եղանակի եւ վայրի, դրա սպառողական հատկանիշների, որակի եւ քանակի կամ դրա արտադրողների առնչությամբ մոլորության մեջ գցելը,

3) տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) կողմից արտադրվող կամ իրացվող ապրանքների ոչ ճշգրիտ համեմատումն այլ տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից արտադրվող կամ իրացվող ապրանքների հետ:

Հոդված 14

Տուգանային պատժամիջոցներ մրցակցության կանոնների խախտման համար

1. Անբարեխիղճ մրցակցությունը հանգեցնում է պաշտոնատար անձանց նկատմամբ 12 000 - 20 000 ռուսական ռուբլի, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ 100 000 - 500 000 ռուսական ռուբլի տուգանք սահմանելուն:

2. Տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) կողմից սույն Համաձայնագրի III բաժնի համաձայն անթույլատրելի համարվող համաձայնագրի կնքումը, ինչպես նաեւ դրանում հավասար մասնակցությունը, հանգեցնում է պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 20 000 - 50 000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը կամ 3 տարի ժամկետով որակազրկմանը, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ իրավախախտի կողմից այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից ստացած հասույթի գումարի մեկ հարյուրերորդականից տասնհինգ հարյուրերորդականի չափով, բայց ոչ պակաս, քան 100 000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը, որի շուկայում տեղի է ունեցել իրավախախտումը, իսկ եթե իրավախախտի կողմից այն ապրանքի (աշխատանքի, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի գումարը, որի շուկայում տեղի է ունեցել իրավախախտումը, գերազանցում է իրավախախտի կողմից բոլոր այն ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի գումարի ընդհանուր չափի 75 տոկոսը, որոնց շուկայում տեղի է ունեցել իրավախախտումը, ապա՝ իրավախախտի կողմից այն ապրանքի

(աշխատանքի, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի գումարի երեք հազարերորդականից մինչև երեք հարյուրերորդական մասի չափով, բայց ոչ պակաս, քան 100 000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը, որի շուկայում տեղի է ունեցել իրավախախտումը:

3. Տնտեսվարող սուբյեկտների այն տնտեսական գործունեության համակարգումը, որը չի թույլատրվում սույն Համաձայնագրի III բաժնի համաձայն՝ հանգեցնում է պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 20 000 - 50 000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը կամ 3 տարի ժամկետով որակազրկմանը, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ իրավախախտի կողմից այն ապրանքի (աշխատանքի, ծառայության), իրացումից ստացած հասույթի գումարի մեկ հարյուրերորդականից տասնհինգ հարյուրերորդականի չափով, բայց ոչ պակաս, քան 100 000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը, որի շուկայում որտեղ տեղի է ունեցել իրավախախտումը, իսկ եթե իրավախախտի կողմից այն ապրանքի (աշխատանքի, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի գումարը, որի շուկայում տեղի է ունեցել իրավախախտումը, գերազանցում է իրավախախտի կողմից բոլոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի գումարի ընդհանուր չափի 7 տոկոսը, ապա՝ իրավախախտի կողմից այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից ստացած հասույթի գումարի երեք հազարերորդականից մինչև երեք հարյուրերորդական մասի չափով, բայց ոչ պակաս, քան 100 000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը, որի շուկայում տեղի է ունեցել իրավախախտումը:

4. Ապրանքաշուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) կողմից այնպիսի գործողություններ կատարելը, որոնք համարվում են գերիշխող դիրքի չարաշահում եւ անթույլատրելի են սույն Համաձայնագրի III բաժնի համաձայն, հանգեցնում է պաշտոնատար անձանց նկատմամբ 20 000 - 50 000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը կամ 3 տարի ժամկետով որակազրկմանը, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ իրավախախտի կողմից այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից ստացած հասույթի գումարի մեկ հարյուրերորդականից տասնհինգ հարյուրերորդականի չափով, բայց ոչ ավել, քան իրավախախտի կողմից բոլոր ապրանքների (աշխատանքի, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի գումարի ընդհանուր չափի մեկ հիսուներորդի եւ ոչ

պակաս, քան 100 000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը, որի շուկայում տեղի է ունեցել իրավախախտումը, իսկ եթե իրավախախտի կողմից այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից ստացած հասույթի գումարը, որի շուկայում տեղի է ունեցել իրավախախտումը, գերազանցում է իրավախախտի կողմից բոլոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի գումարի ընդհանուր չափի 75 տոկոսը, ապա՝ իրավախախտի կողմից այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից ստացած հասույթի գումարի երեք հազարերորդականից մինչև երեք հարյուրերորդական մասի չափով, բայց ոչ ավել, քան իրավախախտի կողմից բոլոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի գումարի ընդհանուր չափի մեկ հիսուներորդի եւ ոչ պակաս, քան 100 000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը, որի շուկայում տեղի է ունեցել իրավախախտումը:

5. Սույն համաձայնագրով նախատեսված տեղեկությունները (տեղեկատվությունը) Մաքսային միության հանձնաժողով կամ Կողմի իրավասու մարմին չներկայացնելը, այդ թվում՝ այդ տեղեկությունները (տեղեկատվություն) նշված մարմնի պահանջով չներկայացնելը, ինչպես նաեւ ակնհայտ ոչ արժանահավատ տեղեկություններ (տեղեկատվություն) ներկայացնելը հանգեցնում է քաղաքացիների նկատմամբ՝ 1 500 -2 500 ռուսական ռուբլու չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 10 000 -15 000 ռուսական ռուբլու չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ 300 000-500 000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը:

6. Տուգանքը ենթակա է փոխանցման այն Կողմի բյուջե, որի տարածքում գրանցված է տնտեսվարող սուբյեկտը (շուկայի սուբյեկտ) հանդիսացող իրավախախտը:

7. Սույն հոդվածի 1-4 կետերով նախատեսված տուգանքները վճարվում են տնտեսվարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) կողմից այն Կողմի ազգային արժույթով, որի տարածքում գրանցված է սույն Համաձայնագրի III բաժնով նախատեսված մրցակցության միասնական կանոնները խախտած տնտեսվարող սուբյեկտը (շուկայի սուբյեկտը)՝ տուգանք նշանակելու մասին Մաքսային միության հանձնաժողովի կողմից որոշում ընդունելու օրվա փոխարժեքով, որը սահմանվում է նշված Կողմի կենտրոնական (ազգային) բանկի կողմից:

8. Անձը, որը ինքնակամ Մաքսային միության հանձնաժողով է (կամ) Կողմի իրավասու մարմինն հայտնում է իր կողմից այնպիսի համաձայնագրի կնքման մասին, որն անթույլատրելի է սույն Համաձայնագրի III բաժնի համաձայն, ազատվում է սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունից՝ հետեւյալ պայմանները համակցված կերպով կատարելու դեպքում.

Անձի կողմից հայտարարությամբ հանդես գալու պահին Մաքսային միության հանձնաժողովը չի տնօրինել կատարված իրավախախտման մասին համապատասխան տեղեկություններ եւ փաստաթղթեր,

անձը հրաժարվել է սույն Համաձայնագրի III բաժնի համաձայն անթույլատրելի համարվող համաձայնագրի մեջ մասնակցությունից կամ հետագա մասնակցությունից,

ներկայացված տեղեկությունները եւ փաստաթղթերը բավարար են իրավախախտման կատարման փաստը հաստատելու համար:

Պատասխանատվությունից ազատվում է այն անձը, որն առաջինն է կատարել սույն կետով նախատեսված բոլոր պայմանները:

Քննության ենթակա չէ այն դիմումը, որը տրամադրվել է միաժամանակ մի քանի այնպիսի անձանց կողմից, որոնք կնքել են սույն Համաձայնագրի III բաժնի համաձայն անթույլատրելի համարվող համաձայնագիր:

9. Սույն հոդվածի համաձայն տուգանք նշանակելու մասին որոշումը կատարողական փաստաթուղթ է եւ ենթակա է կատարման այն Կողմի դատական ակտերի, այլ մարմինների եւ պաշտոնատար անձանց ակտերի հարկադիր կատարման ազգային մարմինների կողմից, որի տարածքում գրանցված է տնտեսվարող սուբյեկտ (շուկայի սուբյեկտ) հանդիսացող իրավախախտը:

Բաժին IV

Մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը

Հոդված 15

Միասնական տնտեսական տարածքում մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողության ոլորտի իրավասու մարմինը

1. Միասնական տնտեսական տարածքում մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողության ոլորտում իրավասու մարմինը Մաքսային միության հանձնաժողովն է:

2. Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից սույն Համաձայնագրի 10-12-րդ հոդվածներով սահմանված արգելքների խախտման դեպքերի խափանումն իրականացնում է Մաքսային միության հանձնաժողովը, եթե այդպիսի խախտումները բացասաբար են անդրադառնում երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա:

3. Մաքսային միության հանձնաժողովը.

քննության է առնում դիմումները (նյութերը), այդ թվում՝ անցկացնում անհրաժեշտ քննություն՝ սույն Համաձայնագրի III բաժնով սահմանված մրցակցության կանոնների այնպիսի խախտման հանցանշաններ հայտնաբերելու վերաբերյալ, որը բացասաբար է անդրադառնում կամ կարող է բացասաբար անդրադառնալ երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա,

Կողմերի իրավասու մարմինների, Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների), Կողմերի իշխանության մարմինների, ֆիզիկական անձանց պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ հարուցում եւ քննության է առնում սույն Համաձայնագրի III բաժնով սահմանված մրցակցության կանոնների այնպիսի խախտման վերաբերյալ գործեր, որը բացասաբար է անդրադառնում կամ կարող է բացասաբար անդրադառնալ երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա,

տալիս է սահմանումներ, ընդունում է տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից կատարման համար պարտադիր որոշումներ, այդ թվում՝ տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) նկատմամբ սույն Համաձայնագրով նախատեսված դեպքերում պատժամիջոցներ կիրառելու մասին,

պահանջում եւ ստանում է տեղեկություններ, այդ թվում՝ գաղտնի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կողմից որոշումներ ընդունելու համար,

դիմում է ներկայացնում Եվրասիական տնտեսական համայնքի դատարան (այսուհետ՝ ԵվրԱզԷՍ-ի դատարան) սույն Համաձայնագրի դրույթների խախտման վերաբերյալ եւ մասնակցում է այդ դատարանի կողմից գործերի քննությանը,

իրականացնում է սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար անհրաժեշտ այլ լիազորություններ:

4. Մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ դիմումների (նյութերի) քննության կարգը, քննության անցկացման կարգը, ինչպես նաեւ մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ:

Հոդված 16

Մաքսային միության հանձնաժողովի եւ Կողմերի իրավասու մարմինների կողմից ընդունված որոշումների բողոքարկումը

1. Մրցակցության ոլորտում Մաքսային միության հանձնաժողովի գործողությունները (անգործությունը), ընդունված ակտերը վիճարկվում են ԵվրԱզԷՍ-ի դատարանում՝ ԵվրԱզԷՍ-ի դատարանի կանոնադրությամբ եւ «Մաքսային միության շրջանակներում ծագող վեճերի վերաբերյալ ԵվրԱզԷՍ-ի դատարան դիմելու եւ այդ գործերով վարույթ իրականացնելու առանձնահատկությունների մասին» համաձայնագրով նախատեսված կարգով:

2. Կողմերի իրավասու մարմինների ակտերը, գործողությունները (անգործությունը) վիճարկվում են Կողմերի դատական մարմիններում՝ Կողմերի գործող ընթացակարգային օրենսդրությանը համապատասխան:

3. Կողմերի իրավասու մարմինների որոշումների վիճարկման վերաբերյալ դիմումներով գործերը՝ Մաքսային միության հանձնաժողովի ենթակայության կանոնների խախտման հիմքով, ենթակա են քննության ԵվրԱզԷՍ-ի դատարանում:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ մասում նշված գործի քննության ժամանակ ԵվրԱզԷՍ-ի դատարանը բացահայտում է Կողմի իրավասու մարմնի կողմից Մաքսային միության հանձնաժողովի ենթակայության կանոնների խախտում, ապա ԵվրԱզԷՍ-ի դատարանը ամբողջությամբ ստուգում է վիճարկվող որոշումը՝ անկախ դիմումի մեջ նշված փաստարկներից:

5. Եթե Կողմի դատարանը դիմում է ստանում Կողմի իրավասու մարմնի ակտը վիճարկելու մասին եւ դրա քննության արդյունքում պարզվում է, որ այն հարաբերությունները, որոնց առնչությամբ ընդունվել է այդ ակտը ենթակա են Մաքսային միության հանձնաժողովի իրավասությանը, ապա Կողմի դատարանը դադարեցնում է գործի վարույթը եւ գործի վարույթի մասնակիցներին ուղղորդում է ԵվրԱզԷՍ-ի դատարան:

6. Եթե սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված գործողության (անգործության) բողոքարկման վերաբերյալ դիմումը միաժամանակ ուղարկվում է Կողմի դատական մարմին եւ ԵվրԱզԷՍ-ի դատարան, ապա Կողմի դատարանը դիմումը թողնում է առանց քննության:

Բաժին V

Կողմերի տարածքում ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ գների պետական կարգավորում սահմանելը

Հոդված 17

Գների կարգավորում սահմանելու կարգը

1. Կողմերի կողմից գների պետական կարգավորում սահմանելն այն ապրանքաշուկաներում, որտեղ բնական մենաշնորհի հաստատված չէ, իրականացվում է բացառիկ դեպքերում, որոնց թվին են դասվում նաեւ արտակարգ իրավիճակները եւ տարերային աղետները, ազգային անվտանգության նկատառումները՝ պայմանով, որ

առաջացած խնդիրները հնարավոր չլինի լուծել այնպիսի եղանակով, որը ավելի քիչ բացասական հետեւանքներ կունենա մրցակցության վիճակի վրա:

2. Որպես ժամանակավոր միջոց Կողմերը հասարակական նշանակություն ունեցող ապրանքների առանձին տեսակների նկատմամբ կարող են սահմանել գների պետական կարգավորում՝ առանձին տարածքներում, որոշակի ժամկետով, Կողմերի օրենսդրությամբ նախատեսված կարգով: Առանձին տարածքում հասարակական նշանակություն ունեցող մեկ տեսակի ապրանքի նկատմամբ սույն կետով նախատեսված գների պետական կարգավորումը կիրառելու ընդհանուր ժամկետը մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել 90 օրը: Այդ ժամկետի երկարաձգումը կարող է իրականացվել Մաքսային միության հանձնաժողովի հետ համաձայնեցմամբ:

3. Կողմը սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված գների պետական կարգավորումը սահմանելու մասին տեղյակ է պահում Մաքսային միության հանձնաժողովին եւ Կողմերին՝ համապատասխան որոշում ընդունելու օրվանից սկսած 7 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում:

4. Գների պետական կարգավորում սահմանելու մասին որոշումը կարող է չեղյալ հայտարարվել Մաքսային միության հանձնաժողովի կողմից՝ սույն Համաձայնագրի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով:

5. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում ծառայությունների, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների գների պետական կարգավորման նկատմամբ, ինչպես նաեւ՝ պետական գնումային եւ ապրանքային միջամտության ոլորտի նկատմամբ:

6. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում սույն Համաձայնագրի հավելվածում նշված ապրանքների գների պետական կարգավորման դեպքերի նկատմամբ:

Հոդված 18

Գների պետական կարգավորում սահմանելու ուղղությամբ Կողմերի գործողությունները վիճարկելը

1. Կողմերից մեկի կողմից գների պետական կարգավորում սահմանելու մասին որոշումը, որը նախատեսված է սույն Համաձայնագրի 17-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ

կետերով, կարող է վերացվել Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ՝ Կողմերից մեկի բողոքի հիման վրա:

Գների պետական կարգավորում սահմանելու մասին որոշումը կարող է վերացվել Մաքսային միության հանձնաժողովի կողմից, եթե այդպիսի կարգավորումը կարող է հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, այդ թվում՝

ստեղծել արգելքներ շուկայի հասանելիության համար,

կրճատել անձանց մեկ խմբի մեջ չընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թիվն այդպիսի շուկայում:

Ընդ որում, Կողմը, որը վիճարկում է գների պետական կարգավորում սահմանելու մասին որոշումը, ապա պետք է ապացուցի, որ գների պետական կարգավորում սահմանելու նպատակին կարելի է հասնել այլ եղանակով, որն ավելի քիչ բացասական հետեւանքներ կունենա մրցակցության վիճակի վրա:

3. Մաքսային միության հանձնաժողովը որոշում է ընդունում գների պետական կարգավորում սահմանելու փաստի կապակցությամբ՝ Կողմի դիմումը Մաքսային միության հանձնաժողովի կողմից ստանալու օրվանից սկսած 2 ամիսը չգերազանցող ժամկետում:

4. Մաքսային միության հանձնաժողովը իրավասու է որոշել գների պետական կարգավորում սահմանելու փաստի առնչությամբ Կողմերի դիմումների ներկայացման եւ քննության կարգը:

5. Եթե Կողմը համաձայն չէ Մաքսային միության հանձնաժողովի որոշման հետ, ապա հարցը ներկայացվում է Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) քննությանը: Այդ դեպքում գների պետական կարգավորում սահմանելու փաստի առնչությամբ ընդունված՝ Մաքսային միության հանձնաժողովի որոշումը ենթակա չէ կատարման նախքան դրա քննությունը Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդում (Մաքսային միության բարձրագույն մարմնում):

Բաժին VI

Կողմերի իրավասու մարմինների միջև համագործակցությունը

Հոդված 19

Կողմերի իրավասու մարմինների միջև համագործակցությունը

Կողմերի իրավասու մարմինների համագործակցությունը սույն Համաձայնագրի կիրարկման շրջանակներում իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների իրավակիրառ գործունեության իրականացման ժամանակ՝ տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ ծանուցումներ, հարցումներ ուղարկելու, առանձին ընթացակարգային գործողություններ կատարելու վերաբերյալ հարցումներ ուղարկելու եւ հանձնարարականներ տալու, տեղեկություններ փոխանակելու, Կողմերի իրավակիրառ գործունեությունը համակարգելու, ինչպես նաեւ Կողմերից մեկի կողմից հարցում ուղարկելու հիմքով իրավակիրառ գործունեություն իրականացնելու միջոցով:

Կողմերի իրավասու մարմինների միջև համագործակցությունն իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների կենտրոնական ապարատի կողմից:

Հոդված 20

Ծանուցումը

1. Կողմերի իրավասու մարմիններից յուրաքանչյուրը ծանուցում է մյուս Կողմի իրավասու մարմնին այն դեպքում, երբ իրեն հայտնի է դառնում, որ իր իրավակիրառ գործունեությունը կարող է շոշափել մյուս Կողմի շահերը մրցակցության պաշտպանության ոլորտում:

2. Մրցակցության պաշտպանության ոլորտում մյուս Կողմի շահերը շոշափող իրավակիրառ գործունեություն ասելով՝ Կողմերը հասկանում են իրենց իրավասու մարմինների այնպիսի գործունեությունը, որը.

առնչություն ունի մյուս Կողմի իրավակիրառ գործունեության հետ,

վերաբերվում է հակամրցակցային գործողություններին (բացառությամբ միաձուլման եւ ձեռք բերման գործարքների եւ այլ գործողությունների կատարման), որոնք իրականացվում են, այդ թվում նաեւ մյուս Կողմի տարածքում,

վերաբերում է այն գործարքներին (այլ գործողություններին), որոնցում գործարքի կողմերից մեկը, կամ գործարքի կողմերից մեկին կամ մի քանիսին վերահսկող կամ նրանց առեւտրատնտեսական գործունեության իրականացման պայմանները այլ կերպ որոշող անձը հանդիսանում է մյուս Կողմի օրենսդրության համաձայն գրանցված կամ հիմնադրված անձ,

կապված է հարկադիր ներգործության միջոցների կիրառման հետ, որոնք պահանջում են իրականացնել կամ արգելում են ձեռնարկել ցանկացած գործողություն մյուս Կողմի տարածքում՝ մրցակցային օրենսդրության պահպանումն ապահովելու շրջանակներում:

3. Գործարքների (այլ գործողությունների) մասին ծանուցումներն ուղարկվում են.

ծանուցող Կողմի իրավասու մարմնի կողմից գործարքի քննության ժամկետի երկարաձգման մասին որոշումն ընդունելու օրվանից ոչ ուշ,

այն դեպքերում, երբ գործարքի առնչությամբ ընդունված որոշումներն ընդունվում են առանց դրա քննության ժամկետը երկարաձգելու՝ ոչ ուշ, քան գործարքի վերաբերյալ որոշում ընդունելու օրվանից սկսած ողջամիտ ժամկետում, որը հնարավորություն կտա ծանուցում ստացող Կողմին արտահայտել իր կարծիքը գործարքի վերաբերյալ:

4. Մյուս Կողմի կարծիքը հաշվի առնելու հնարավորությունն ապահովելու նպատակով, սույն հոդվածի 2-րդ կետի երկրորդ, երրորդ եւ հինգերորդ պարբերություններով նախատեսված հարցերով ծանուցումներն ուղարկվում են այդ Կողմին գործի քննության փուլում՝ այնպիսի հանգամանքների հայտնաբերման դեպքում, որոնց մասին անհրաժեշտ է ծանուցել մյուս Կողմին՝ պահպանելով ողջամիտ ժամկետները, որոնք հնարավորություն են տալիս ծանուցում ստացող Կողմին արտահայտելու իր կարծիքը, սակայն, բոլոր դեպքերում՝ նախքան գործի վերաբերյալ որոշում ընդունելը կամ համաշխարհային համաձայնագիր կնքելը:

5. Ծանուցումն ուղարկվում է գրավոր ձեւով եւ պետք է պարունակի տեղեկություններ, որոնք բավարար են՝ ծանուցում ստացող Կողմին հնարավորություն

տալու համար անցկացնել ծանուցող Կողմի իրավակիրառ գործունեության այն հետեանքների նախնական վերլուծություն, որոնք շոշափում են ծանուցում ստացող Կողմի շահերը:

Հոդված 21

Տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու մասին հարցումներ ուղարկելը եւ առանձին ընթացակարգային գործողություններ կատարելու վերաբերյալ հանձնարարականներ տալը

1. Կողմերի իրավասու մարմիններն իրավասու են հարցումներ ուղարկել տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ, ինչպես նաեւ հանձնարարականներ տալ առանձին ընթացակարգային գործողություններ կատարելու վերաբերյալ:

2. Տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ հարցումը, առանձին ընթացակարգային գործողություններ կատարելու վերաբերյալ հանձնարարականը ձեւակերպվում են գրավոր ձեւով Կողմի իրավասու մարմնի ձեւաթղթի վրա եւ պետք է ներառեն.

1) համապատասխան գործի համարը (առկայության դեպքում), որի առնչությամբ տեղեկություններ են պահանջվում, իրավախախտման եւ դրան առնչվող այլ փաստերի մանրամասն նկարագրությունը, արարքի իրավաբանական որակումը՝ հարցում ուղարկող Կողմի օրենսդրության համաձայն՝ կից ներկայացնելով կիրառվող օրենքի տեքստը,

2) այն անձանց անունները, հայրանունները եւ ազգանունները, որոնց առնչությամբ իրականացվում է համապատասխան գործերի քննություն, վկաների անունները, հայրանունները եւ ազգանունները, նրանց բնակության կամ գտնվելու վայրը, քաղաքացիությունը, զբաղմունքը, ծննդյան վայրն ու ամսաթիվը, իրավաբանական անձանց դեպքում՝ դրանց անվանումը եւ գտնվելու վայրը (եթե թվարկված տվյալների վերաբերյալ առկա են տեղեկություններ),

3) փաստաթուղթը հանձնելու մասին հանձնարարականի մեջ՝ ստացողի ճշգրիտ հասցեն եւ հանձնվող փաստաթղթի անվանումը,

4) ներկայացնելու ենթակա տվյալների եւ կատարման ենթակա գործողությունների ցանկը (հարցում անցկացնելու համար անհրաժեշտ է նշել, թե ինչ հանգամանքներ պետք է պարզվեն եւ ճշգրտվեն, ինչպես նաեւ՝ այն հարցերի հաջորդականությունն ու ձեւակերպումը, որոնք պետք է ներկայացվեն հարցման ենթարկվողներին):

3. Տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ հարցումը, ընթացակարգային առանձին գործողություններ կատարելու վերաբերյալ հանձնարարականը կարող են նաեւ ներառել.

1) պահանջվող միջոցների իրականացման ժամկետի մասին նշումը,

2) ուղարկվող հարցման մեջ նշված միջոցները որոշակի հերթականությամբ իրականացնելու մասին միջնորդությունը,

3) հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմինների ներկայացուցիչներին՝ ուղարկվող հարցման մեջ նշված միջոցների իրականացմանը ներկա գտնվելու, ինչպես նաեւ դրանց իրականացմանը մասնակցելու հնարավորություն ընձեռելու մասին միջնորդությունը, եթե դա չի հակասում յուրաքանչյուր Կողմի օրենսդրությանը,

դ) հարցումը, հանձնարարականը կատարելու հետ կապված այլ միջնորդություններ:

4. Տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ հարցումը, ընթացակարգային առանձին գործողություններ կատարելու վերաբերյալ հանձնարարականը ստորագրվում են Կողմի՝ հարցում ուղարկող իրավասու մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից: Ուղարկվող հարցմանը կամ հանձնարարականին պետք է կցվեն այն փաստաթղթերի առկա պատճենները, որոնց վրա առկա են ուղարկվող հարցման կամ հանձնարարականի տեքստում կատարված հղումներ, ինչպես նաեւ դրանց պատշաճ իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

5. Այն փորձաքննությունների եւ ընթացակարգային այլ գործողությունների իրականացման վերաբերյալ հանձնարարականները, որոնց կատարման համար կատարող Կողմից պահանջվում են լրացուցիչ ծախսեր, ներկայացվում են Կողմերի իրավասու մարմինների միջեւ ձեռք բերված նախնական համաձայնությամբ:

6. Կողմերի իրավասու մարմինները կարող են ընթացակարգային փաստաթղթերը փոստով ուղարկել անմիջապես մյուս Կողմի տարածքում գտնվող՝ համապատասխան գործերի մասնակիցներին:

7. Թույլատրվում է կրկին ուղարկել տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ հարցում, ինչպես նաեւ կրկին տալ առանձին ընթացակարգային գործողություններ կատարելու վերաբերյալ հանձնարարական՝ լրացուցիչ տվյալներ ստանալու կամ այնպիսի տեղեկություններ ճշգրտելու անհրաժեշտության դեպքում, որոնք ստացվել են նախկին՝ ուղարկվող հարցման կամ հանձնարարականի կատարման ընթացքում:

Հոդված 22

Առանձին գործողությունների իրականացման վերաբերյալ հանձնարարականները եւ տեղեկություններ ու փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ ուղարկվող հարցումները կատարելը

1. Տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ ուղարկվող հարցումը եւ առանձին ընթացակարգային գործողությունների իրականացման վերաբերյալ հանձնարարականը կատարվում են դրանք ստանալու օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում կամ Կողմերի իրավասու մարմինների կողմից նախօրոք համաձայնեցված այլ ժամկետում:

Կողմի այլ պետական մարմնի կամ հարցումը ստացող Կողմի տնտեսվարող սուբյեկտին դիմելու անհրաժեշտության դեպքում, նշված ժամկետներն ավելացվում են այդպիսի դիմելն իրագործելու համար անհրաժեշտ ժամանակով:

2. Կողմի՝ հարցումը ստացող իրավասու մարմինը կատարում է հարցման կամ հանձնարարականի մեջ նշված գործողությունները եւ պատասխանում առաջադրված հարցերին: Կողմի՝ հարցումը ստացող իրավասու մարմինն իրավասու է սեփական նախաձեռնությամբ իրականացնել հարցմամբ կամ հանձնարարականով չնախատեսված այնպիսի գործողություններ, որոնք կապված են դրանց կատարման հետ:

3. Եթե հնարավոր չէ հարցումը կամ հանձնարարականը կատարել սույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետում, ապա հարցումը ստացող իրավասու մարմինը պետք է

տեղեկացնի Կողմի հարցումն ուղարկող իրավասու մարմինն՝ հարցման կամ հանձնարարականի կատարման ենթադրվող ժամկետների մասին:

4. Կողմերի իրավասու մարմիններն ուսումնասիրում են տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ ուղարկվող հարցումները, առանձին ընթացակարգային գործողությունների իրականացման վերաբերյալ հանձնարարականները կատարելու պրակտիկան՝ դրանց պատշաճ կատարման փաստերի մասին տեղեկացնելով միմյանց:

5. Այն փաստաթղթերը, որոնք կազմված կամ հաստատված են որեւէ հաստատության կամ դրա համար հատուկ լիազորված պաշտոնատար անձի կողմից՝ նրանց իրավասությունների շրջանակներում, եւ որոնք Կողմերից մեկի տարածքում վավերացված են զինանշանի պատկերով կնիքով, առանց որեւէ հատուկ հաստատման ընդունվում են այլ Կողմերի տարածքում:

6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավական օգնություն ցուցաբերելը կարող է մերժվել, եթե ուղարկված հարցումը կատարելու գործընթացը կարող է վնաս հասցնել հարցումն ստացող Կողմի ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ հարցումը ստացող Կողմի այլ շահերին կամ հակասում է դրա օրենսդրությանը:

7. Յուրաքանչյուր Կողմ ինքնուրույն է կրում այն ծախսերը, որոնք առաջանում են ուղարկված հարցումներն ու հանձնարարականները կատարելու կապակցությամբ:

Առանձին դեպքերում Կողմերի իրավասու մարմինները կարող են համաձայնեցնել ծախսերի կատարման այլ կարգ:

Հոդված 23

Առանձին ընթացակարգային գործողությունների իրականացման վերաբերյալ հանձնարարականներ տալը

1. Կողմերի իրավասու մարմիններն առանձին եւ այլ գործողություններ իրականացնելու վերաբերյալ հանձնարարականները կատարելիս՝

1) հարցման են ենթարկում այն անձանց, որոնց գործը քննվում է, ինչպես նաև վկաներին,

2) պահանջում են գործով վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր,

3) իրականացնում են տեսազննում,

4) ձեռք են բերում գործով վարույթի իրականացման կամ դրա քննության համար անհրաժեշտ տեղեկություններ պետական մարմիններից եւ անձանցից,

5) համապատասխան գործի մասնակիցներին հանձնում են համապատասխան փաստաթղթերը եւ դրանց պատճենները,

6) իրականացնում են փորձաքննություն եւ այլ գործողություններ:

2. Համապատասխան գործերով ընթացակարգային եւ այլ գործողություններն իրականացվում են հարցումն ստացող Կողմի օրենսդրության համաձայն:

3. Այն դեպքում, երբ հարցումն ստացող Կողմի օրենսդրությամբ առանձին ընթացակարգային գործողությունների կատարման համար պահանջվում է իրավասու պաշտոնատար անձանց կողմից հատուկ որոշումների ընդունում, ապա դրանք ընդունվում են՝ ըստ հանձնարարականի կատարման վայրի:

4. Կողմերի իրավասու մարմինների համաձայնությամբ՝ հարցումն ստացող Կողմի տարածքում ընթացակարգային գործողությունները կարող են կատարվել հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմնի ներկայացուցիչների ներկայությամբ կամ նրանց մասնակցությամբ՝ հարցումն ստացող Կողմի օրենսդրության համաձայն:

Հոդված 24

Տեղեկությունների փոխանակումը

1. Կողմերի իրավասու մարմինները՝ հաշվի առնելով իրենց օրենսդրությունների պահանջները փոխանակում են տեղեկություններ.

1) ապրանքաշուկաների վիճակի, տնտեսության կառուցվածքային վերակառուցման շրջանակներում ապամենաշնորհացման մոտեցումների եւ գործնական արդյունքների, մենաշնորհային գործունեության կանխարգելման, սահմանափակման եւ

խափանման եւ մրցակցության խթանման մեթոդների եւ աշխատանքային փորձի վերաբերյալ,

2) գերիշխող դիրք ունեցող եւ Կողմերի ապրանքաշուկաներ արտադրանքի մատակարարում իրականացնող ձեռնարկությունների ներպետական ռեգիստրներում ընդգրկված տեղեկությունների վերաբերյալ,

3) Կողմերից յուրաքանչյուրի կողմից հակամենաշնորհային օրենսդրության խախտումների մասին գործերի քննության պրակտիկայի վերաբերյալ:

2. Կողմերի իրավասու մարմինները համագործակցում են հակամենաշնորհային քաղաքականության ներպետական օրենքների եւ նորմատիվ փաստաթղթերի մշակման հարցում՝ տեղեկություններ եւ մեթոդական օգնություն տրամադրելու միջոցով:

3. Կողմերից յուրաքանչյուրի իրավասու մարմինը մյուս Կողմի իրավասու մարմինն է հանձնում իր տիրապետման տակ գտնվող ցանկացած տեղեկություն հակամրցակցային գործողությունների վերաբերյալ, եթե այդպիսի տեղեկությունները, ուղարկող Կողմի իրավասու մարմնի կարծիքով, առնչություն ունեն կամ կարող են հիմք ծառայել մյուս Կողմի իրավասու մարմնի իրավակիրառ գործունեության համար:

4. Կողմերի իրավասու մարմիններից յուրաքանչյուրը իրավասու է մյուս Կողմի իրավասու մարմինն ուղարկել հարցում այն գործի հանգամանքները շարադրող համապատասխան տեղեկությունների տրամադրման մասին, որի քննության համար պահանջվում են հարցվող տեղեկությունները:

Հարցումը ստացած Կողմի իրավասու մարմինը մյուս Կողմի հարցում ուղարկող իրավասու մարմինն տրամադրում է իր տիրապետման տակ գտնվող տեղեկությունները, եթե այն համարում է, որ այդպիսի տեղեկությունները կապ ունեն հարցում ուղարկող Կողմի իրավակիրառ գործունեության հետ:

Հարցվող տեղեկություններն ուղարկվում են Կողմերի իրավասու մարմինների կողմից համաձայնեցված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան հարցումը ստանալու օրվանից 60 օր հետո:

Ստացված տեղեկություններն օգտագործվում են միայն համապատասխան հարցման կամ խորհրդատվության նպատակներով եւ ենթակա չեն հրապարակման կամ փոխանցման երրորդ անձանց առանց նշված տեղեկությունները փոխանցած Կողմի իրավասու մարմնի համաձայնության:

Հոդված 25

Կողմերից մեկի հարցման հիման վրա իրավակիրառ գործունեություն իրականացնելը

1. Եթե Կողմերից մեկը համարում է, որ մյուս Կողմի տարածքում իրականացվող հակամրցակցային գործողությունները, բացասաբար են անդրադառնում իր շահերի վրա, ապա այն կարող է այդ մասին ծանուցել այն Կողմին, որի տարածքում իրականացվում են հակամրցակցային գործողությունները, ինչպես նաև կարող է դիմել այդ Կողմին համապատասխան հակամրցակցային գործողությունները խափանելու հետ կապված պատշաճ իրավակիրառ գործողություններ իրականացնելու պահանջով: Նշված համագործակցությունն իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների միջոցով:

Ծանուցումը պետք է պարունակի տեղեկություններ հակամրցակցային գործողությունների բնույթի եւ ծանուցող Կողմի շահերի համար դրանց հնարավոր հետեւանքների մասին, ինչպես նաև լրացուցիչ տեղեկությունների տրամադրման եւ այլ տեսակի այնպիսի համագործակցության մասին առաջարկ, որը ծանուցող Կողմն իրավասու է առաջարկել:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ծանուցումը ստանալուց եւ Կողմերի իրավասու մարմինների միջեւ բանակցություններ վարելուց հետո, եթե դրանց անցկացումն անհրաժեշտ է, ծանուցում ստացող Կողմը լուծում է ծանուցման մեջ նշված հակամրցակցային գործողությունների նկատմամբ իրավակիրառ գործողություններ սկսելու կամ ավելի վաղ սկսված իրավակիրառ գործողություններն ընդլայնելու անհրաժեշտության հարցը: Ծանուցումը ստացող Կողմը տեղեկացնում է ծանուցող Կողմին ընդունված որոշման մասին: Ծանուցման մեջ նշված հակամրցակցային գործողությունների նկատմամբ իրավակիրառ գործողություններ իրականացնելիս ծանուցումը ստացող Կողմը տեղեկացնում է ծանուցող Կողմին համապատասխան իրավակիրառ գործողությունների արդյունքների մասին:

Իրավակիրառ գործողություններ նախաձեռնելու հարցը լուծելիս ծանուցում ստացող Կողմը ղեկավարվում է մրցակցության պաշտպանության մասին իր օրենսդրությամբ:

Սույն հոդվածի դրույթները չեն սահմանափակում ծանուցող Կողմի իրավունքներն իրականացնելու այնպիսի իրավակիրառ գործողություններ, որոնք նախատեսված են մրցակցության պաշտպանության մասին այդ Կողմի օրենսդրությամբ:

Հոդված 26

Կողմերի իրավակիրառ գործունեության համակարգումը

1. Փոխկապակցված գործարքների (կատարվող գործողությունների) նկատմամբ իրավակիրառ գործողությունների իրականացման մեջ փոխադարձ շահագրգռվածության առկայության դեպքում, Կողմերի իրավասու մարմիններն իրավակիրառ գործողություններ իրականացնելիս կարող են պայմանավորվել համագործակցելու մասին: Իրավակիրառ գործողությունների իրականացման ընթացքում համագործակցելու հարցը լուծելիս՝ Կողմերի իրավասու մարմինները հաշվի են առնում հետեւյալ գործոնները.

1) իրավակիրառ գործունեությանն ուղղված նյութական եւ տեղեկատվական ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործելու եւ (կամ) իրավակիրառ գործունեություն իրականացնելու ընթացքում Կողմերի կրած ծախքերը նվազեցնելու հնարավորությունը,

2) իրավակիրառ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու առնչությամբ Կողմերի ունեցած հնարավորությունները,

3) նման համագործակցության ենթադրվող արդյունքը՝ համագործակցող Կողմերի հնարավորությունների ավելացումն՝ իրենց իրավակիրառ գործունեության նպատակներին հասնելու առումով:

2. Մյուս Կողմին պատշաճ ծանուցելու դեպքում, Կողմերից յուրաքանչյուրը կարող է սահմանափակել կամ դադարեցնել սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը եւ իրականացնել իրավակիրառ գործողություններ միմյանցից անկախ՝ իրենց օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 27

Տեղեկությունների գաղտնիությունը

1. Սույն Համաձայնագրի 19-26-րդ հոդվածներով նախատեսված հարցերով համագործակցության շրջանակներում տրամադրված տեղեկությունները եւ փաստաթղթերը գաղտնի բնույթ են կրում եւ կարող են օգտագործվել բացառապես սույն Համաձայնագրով նախատեսված նպատակներով: Տեղեկությունների օգտագործումն ու

երրորդ անձանց փոխանցումն այլ նպատակներով հնարավոր են միայն այն Կողմի իրավասու մարմնի գրավոր համաձայնությամբ, որը տրամադրել է դրանք:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է տեղեկությունների, փաստաթղթերի եւ այլ տվյալների, այդ թվում՝ մյուս Կողմի իրավասու մարմնի կողմից ներկայացվող անձնական տվյալների պաշտպանությունը:

Բաժին VII

Համաձայնագրի կիրարկումը

Հոդված 28

Համաձայնագրի կիրարկման փուլերը

Սույն Համաձայնագրի կիրարկումը տեղի է ունենում հետեւյալ փուլերի հերթականության պահպանմամբ.

Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողության ոլորտում իրավասու մարմնի գործունեության եւ սույն Համաձայնագրի 16-րդ հոդվածով նախատեսված կարգով այդ մարմնի որոշումների բողոքարկումն իրականացնելու համար անհրաժեշտ նորմատիվային բազայի ստեղծումը,

Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության ներդաշնակեցումը սույն Համաձայնագրի 30-րդ հոդվածով նախատեսված կարգով,

Մրցակցության այն միասնական կանոնները Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից պահպանելու նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունների փոխանցումը Մաքսային միության հանձնաժողովին, որոնց խախտումը բացասաբար է անդրադառնում կամ կարող է բացասաբար անդրադառնալ երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա՝ սույն Համաձայնագրի 31-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 29

Մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման համար անհրաժեշտ նորմատիվային բազայի ստեղծումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 12 ամսվա ընթացքում Մաքսային միության հանձնաժողովը հաստատում է.

- 1) մրցակցության վիճակի գնահատման մեթոդաբանությունը,
- 2) մենաշնորհային բարձր (ցածր) գների սահմանման մեթոդաբանությունը,
- 3) սույն Համաձայնագրով նախատեսված տուգանքների հաշվարկման մեթոդաբանությունը եւ տուգանքների նշանակման կարգը,
- 4) անհրաժեշտության դեպքում՝ տնտեսության տարբեր ճյուղերում մրցակցության կանոնների կիրառման առանձնահատկությունները,
- 5) մրցակցության կանոնների խախտման մասին դիմումների (նյութերի) քննության կարգը,
- 6) մրցակցության կանոնների խախտման առնչությամբ քննություն իրականացնելու կարգը,
- 7) մրցակցության կանոնների խախտումների մասին գործերի քննության կարգը,
- 8) Մաքսային միության հանձնաժողովի եւ Կողմերի իրավասու մարմինների համագործակցության կարգը, այդ թվում՝ տեղեկատվության ոլորտում,
- 9) Մաքսային միության հանձնաժողովի այն ստորաբաժանումների գործառույթներն ու կառուցվածքը, որոնք ապահովում են սույն Համաձայնագրի III բաժնով սահմանված մրցակցության կանոնների խախտումների մասին գործերով քննության անցկացումը եւ նյութերի նախապատրաստումը, ինչպես նաեւ այդպիսի ստորաբաժանումների թիվը եւ կարգավիճակը, դրանց անձնակազմերին ներկայացվող պահանջները, աշխատակարգը եւ դրանց գործունեությունը ֆինանսավորելու կարգը ,
- 10) այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են մրցակցության միասնական կանոնների կիրարկումն ապահովելու համար:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 12 ամսվա ընթացքում Կողմերն ապահովում են ԵվրԱզԷՍ-ի դատարանի շրջանակներում առանձին կազմի

ձեռավորումը՝ մրցակցության կանոնների խախտումների մասին գործերի քննության հարցերով:

Հոդված 30

Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության ներդաշնակեցումը

1. Կողմերն իրենց օրենսդրությունը համապատասխանեցնում են սույն Համաձայնագրի II բաժնով եւ III բաժնով սահմանված մրցակցության սկզբունքներին եւ կանոններին:

2. Մրցակցային քաղաքականության ոլորտում Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությունը ներդաշնակեցնելու նպատակներով Մաքսային միության հանձնաժողովը Կողմերի ներկայացմամբ իր որոշման հիման վրա սահմանում է, թե այս ոլորտում Կողմերի որ նորմատիվ իրավական ակտերը պետք է փոփոխվեն կամ ընդունվեն, ինչպես նաեւ որոշում է այդ ոլորտում Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության ներդաշնակեցման վերաբերյալ համապատասխան միջոցների իրականացման հերթականությունը, նաեւ սահմանում է այն ժամկետը (ոչ ավելի, քան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից 18 ամիս), որի ընթացքում Կողմերն իրենց օրենսդրությունը համապատասխանեցնում են մրցակցության սկզբունքներին եւ կանոններին, ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի II եւ III բաժիններով:

Նույն ժամանակահատվածում Կողմերն ապահովում են մրցակցության մասին մոդելային օրենքի մշակումն ու ընդունումը:

Հոդված 31

Մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու՝ Կողմերի լիազորությունները Մաքսային միության հանձնաժողովին փոխանցելու փուլերը

1. Կողմերն իրականացնում են մրցակցության միասնական կանոնները Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից պահպանելու նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունների փոխանցումը Մաքսային միության հանձնաժողովին՝ կապված այն անբարեխիղճ մրցակցության նկատմամբ արգելքը

պահպանելու հետ, որը բացասաբար է անդրադառնում կամ կարող է բացասաբար անդրադառնալ երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա՝ ոչ ուշ, քան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 ամիս հետո եւ պայմանով, որ կատարվեն սույն Համաձայնագրի 29-րդ եւ 30-րդ հոդվածների պահանջները:

Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունների փոխանցումը Մաքսային միության հանձնաժողովին՝ կապված մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքները շոշափող հարցերին առնչվող անբարեխիղճ մրցակցության նկատմամբ արգելքը պահպանելու հետ, իրականացվում է միայն Կողմերի կողմից մտավոր սեփականության պաշտպանության ոլորտում կարգավորման միասնական կանոնների մասին համաձայնագիր մշակելուց եւ ընդունելուց հետո:

2. Կողմերն իրականացնում են մրցակցության միասնական կանոնները Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից պահպանելու նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունների փոխանցումը Մաքսային միության հանձնաժողովին՝ կապված այն հակամրցակցային համաձայնագրերի նկատմամբ արգելքը պահպանելու հետ, որոնք բացասաբար են անդրադառնում կամ կարող են բացասաբար անդրադառնալ երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա՝ ոչ ուշ, քան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 22 ամիս հետո եւ պայմանով, որ կատարվեն սույն Համաձայնագրի 29-րդ եւ 30-րդ հոդվածների պահանջները:

3. Կողմերն իրականացնում են մրցակցության միասնական կանոնները Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից պահպանելու նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունների փոխանցումը Մաքսային միության հանձնաժողովին՝ կապված գերիշխող դիրքի չարաշահման նկատմամբ արգելքը պահպանելու հետ, որը բացասաբար է անդրադառնում կամ կարող է բացասաբար անդրադառնալ երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա՝ ոչ ուշ, քան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 2

տարի հետո եւ պայմանով, որ կատարվեն սույն Համաձայնագրի 29-րդ եւ 30-րդ հոդվածների պահանջները:

4. Նախքան սույն հոդվածի 1-3 կետերի համաձայն սույն Համաձայնագրի III բաժնով սահմանված մրցակցության կանոնների խախտումների մասին գործերի քննության լիազորությունները Մաքսային միության հանձնաժողովին փոխանցելը, մրցակցության նշված կանոնները Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից պահպանելու նկատմամբ հսկողության ապահովումն իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից՝ Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան:

Կողմերի իրավասու մարմինները բոլոր հնարավոր միջոցներով աջակցում են Կողմի այն իրավասու մարմնին, որը քննում է սույն Համաձայնագրի III բաժնով սահմանված մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործը՝ սույն Համաձայնագրի III բաժնով նախատեսված կարգով:

Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից մրցակցության կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնելիս Կողմերի իրավասու մարմինները ղեկավարվում են սույն Համաձայնագրով եւ Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությամբ՝ այն հարցերի առնչությամբ, որոնք չեն կարգավորվում սույն Համաձայնագրով:

5. Նախքան սույն Համաձայնագրի III բաժնով սահմանված այն մրցակցության միասնական կանոնները Կողմերի տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից պահպանելու նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունները Մաքսային միության հանձնաժողովին փոխանցելը, որոնց խախտումը բացասաբար է անդրադառնում կամ կարող է բացասաբար անդրադառնալ երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա՝ Հանձնաժողովը վերահսկում է մրցակցության միասնական կանոնների պահպանման ապահովումը Կողմերի իրավասու մարմինների կողմից:

6. Մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու՝ Կողմերի լիազորությունների փոխանցումը Մաքսային միության հանձնաժողովին ձեւակերպվում է Եվրասիական տնտեսական համայնքի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) Միջպետական խորհրդի որոշմամբ, որով ամրագրվում է

համապատասխան լիազորությունների փոխանցման համար անհրաժեշտ՝ սույն Համաձայնագրի 29-րդ եւ 30-րդ հոդվածներով նախատեսված պահանջների կատարման փաստը:

7. Սույն հոդվածով նախատեսված լիազորությունների փոխանցումը Մաքսային միության հանձնաժողովին տեղի է ունենում Կողմերի՝ գաղտնի տեղեկատվության պաշտպանության կարգը սահմանելու եւ Մաքսային միության հանձնաժողովի կողմից իր լիազորություններն իրականացնելիս դրանց հրապարակման համար պատասխանատվությունը նախատեսելու մասին համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պայմանով:

Բաժին VIII

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 32

Կողմերի մրցակցային քաղաքականությունը երրորդ երկրների նկատմամբ

Կողմերն իրականացնում են համաձայնեցված մրցակցային քաղաքականություն երրորդ երկրների տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) գործողությունների նկատմամբ, եթե այդպիսի գործողությունները կարող են բացասաբար անդրադառնալ Կողմերի ապրանքաշուկաներում մրցակցության վիճակի վրա:

Հոդված 33

Վեճերի կարգավորումը

Կողմերը կարգավորում են սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վեճերը խորհրդակցությունների միջոցով, իսկ այն դեպքում, երբ Կողմը մերժում է խորհրդակցությունների անցկացումը կամ դրանց

անցկացման արդյունքում Կողմերը չեն կայացնում փոխադարձ ընդունելի որոշում, ապա այն Կողմը, որի շահերը խախտվել են, իրավասու է դիմել ԵվրԱզԷՍ-ի դատարան:

Հոդված 34

Համաձայնագրում փոփոխություններ կատարելը

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 35

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման:

Սույն Համաձայնագիրը՝ բացառությամբ սույն Համաձայնագրի 16-րդ հոդվածի, ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարելու մասին ավանդապահի կողմից վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագրի 16-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում միայն սույն Համաձայնագրի 29-րդ եւ 30-րդ հոդվածներով, 31-րդ հոդվածի 1-3-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված պայմանների կատարումից հետո:

Սույն Համաձայնագրի ցանկացած Կողմ կարող է դուրս գալ դրանից՝ ոչ պակաս, քան դուրս գալու օրվանից 6 ամիս առաջ ավանդապահին դիվանագիտական ուղիներով իր այդ մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

Սույն Համաձայնագիրը բաց է՝ այլ պետությունների կողմից դրան միանալու համար՝ պայմանով, որ նրանք ընդունեն Մաքսային միության իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունները, եւ առկա լինի բոլոր Կողմերի համաձայնությունը:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է ավանդապահի մոտ, որի գործառույթներն իրականացնում է Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեն:

Բելառուսի
Հանրապետության
կողմից՝

(ստորագրություն)

Ղազախստանի
Հանրապետության
կողմից՝

(ստորագրություն)

Ռուսաստանի
Դաշնության
կողմից՝

(ստորագրություն)

Հավելված

**Մրցակցության միասնական
սկզբունքների եւ կանոնների մասին
համաձայնագրի**

**ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՉԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ ՍՈՒՅՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

1. Բնական գազ
2. Հեղուկացված գազ կենցաղային կարիքների համար
3. Էլեկտրական եւ ջերմային էներգիա
4. Օդու, լիկյոր-օդու եւ այլ ալկոհոլային արտադրանք՝ 28 տոկոսից ավելի թնդություն ունեցող (նվազագույն գին)
5. Էթիլային սպիրտ սննդի հումքից (նվազագույն գին)
6. Դեղորայք
7. Կարծր վառելիք, հեղուկ վառելիք եւ կերոսին կենցաղային կարիքների համար
8. Միջուկային վառելիքային ցիկլի արտադրանք
9. Նավթամթերք